ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Գ.Նարեկացու «Մատյան...»-ի ուսուցումը

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Հայկանուշ Ներսիսյան

Բովանդակություն

Ներածություն.....2

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը.....4

Գ. Նարեկացու «Մատյան...»-ի ուսուցումը.....10

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականության ցանկ.....16

Ներածություն

Ժամանակակից տեղեկատվական քաղաքակրթության դարաշրջանում աշխատում ենք այնպիսի պայմաններում,երբ գիտելիքներն արագ հնանում են,քան հասցնում են յուրացվել սովորողի կողմից,այդ պատճառով ստեղծագործ անհատի պատրաստման համար անհրաժեշտ են ուսուցման նոր մեթոդներ և ձևեր:

Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է,մարդուն այնպես դաստիարակելը,որ համապատասխանի ժամանակակից պահանջներին:Այդ պատճառով էլ ուսուցումն այնպես պետք է կազմակերպել,որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ:

Գրականության դպրոցական ծրագրում ընդգրկված են նյութեր,որոնց ուսուցումը բուն գրական գիտելիքներից բացի պայմանավորում է դպրոցականի արժեքային համակարգի,բարոյական կերպարի,մասնավորաբար հոգևոր ընկալկումների ձևավորում և զարգացում:Սակայն խնդրի լուծումը հնարավոր չէ իրականացնել սովորական դասի հայտնի ցուցիչներով ՝ ընթերցել ,անգիր ասել,վերլուծել,ուստի ենթադրում է ուսուցման կազմակերպման այլ մոտեցումներ:

Այդպիսիք կարող են լինել սովորողի ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար հանձնարարվող ռեֆերատները, բանավոր և գրավոր հաղորդումները, ուսուցչի կողմից ստեղծված կողմնորոշիչ հարցաշարը կամ պնդումների փունջը, խնդրահարույց շարադրանքը, համառոտ դասախոսությունը, բանավեճերը և այլն:

Ցանկացած նյութի ուսուցում արդյունավետ է,եթե ճիշտ են սահմանվում նպատակներն ու խնդիրները:

Նպատակ՝ մեր ազգային հոգևոր ժառանգության ամենանշանակալի երկի ճանաչում և իմացություն, նրա համամարդկային նշանակության գիտակցում և արժևորում:

Խնդիր՝ խթանել ազգային հոգևոր արժեքների ճանաչման ուսումնառական հետաքրքրվածություն, սովորողներին հաղորդակից դարձնել մատյանի ոգուն և գեղարվեստական կերտվածքին, սերմանել և ձևավորել քրիստոնեական համամարդկային արժեքներով ապրելու գիտակից ըմբռնումներ:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ (951-1003), հայ բանաստեղծ, փիլիսոփա, երաժիշտ: Նրան անվանել են բացարձակ հանճար, չքնաղ բանաստեղծ, փայլուն փիլիսոփա, հմուտ հոգեբան, խորիմաստ գիտնական, լուսավորիչ, սքանչելագործ, հրեշտակ՝ մարմնի մեջ: նարեկացին համարվում է հայ գրականության վերածնության հիմնադիր, հայ վերածնության փիլիսոփայական մտքի գագաթը:

Ծնվել է Վանա լճի հարավային ափերին գտնվող գյուղերից մեկում: Փոքր հասակից կապված էր Ռշտունյաց աշխարհի Նարեկ գյուղի վանքի հետ, որից և՝ Նարեկացի անունը: Վանքի վանահայրն էր մոր հորեղբայրը՝ փիլիսոփա Անանիա Նարեկացին: Հնագույն ձեռագիր կենսագրականներում, բանաստեղծի գործերում, ինքնակենսագրական բնույթի հիշատակություններում Գրիգոր Նարեկացու կյանքի մասին պահպանվել են ոչ շատ, բայց հավաստի տեղեկություններ: Ուսումնառությունն անցել է վանքի՝ X դ. հռչակված դպրոցում, Անանիա Նարեկացու ղեկավարությամբ: Յուրացնելով դպրոցի մատենադարանի թարգմանական և ինքնուրույն ձեռագիր երոնա-փիլիսոփայական գրականությունը՝ Գրիգոր Նարեկացին հետագայում դարձել է ուսման այդ կենտրոնի սյուներից մեկը:

Գրիգոր Նարեկացուց մնացել են բավական թվով գործեր՝ «Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի», չորս ներբող, գանձեր, տաղեր (թվով 30-ից ավելի), «Մատեան ողբերգութեան» պոեմը, թղթեր և այլ գործեր: Այդ երկերից լավագույնները տաղերն են և «Մատեան ողբերգութեան» քնարական պոեմը: Տաղերի մեծ մասն իրենց գաղափարական բովանդակությամբ և արտահայտչական ձևերով արտացոլում են X դարի հասարակական կյանքի տեղաշարժերը: Ճիշտ է, տաղերում մարդու ներաշխարհի, նրա խոհերի ու ապրումների պատկերները դեռ այնքան խորը չեն, բայց «Մատեան ողբերգութեան» մեջ դրանք հասնում են գերօրինակ ուժի ու բարձրության:

«Մատյան ողբերգության» պոեմը հայ միջնադարյան գրականության մտքի ամենամեծ արգասիքն է, պատկանում է մարդկության ստեղծած գեղարվեստական մեծագույն արժեքների թվին: Պոեմը ամփոփում է այն լավագույնը, ինչ ստեղծել է հայ քերթողական միտքը հնագույն ժամանակներից մինչև X դարը: Պոեմը բաղկացած է

95 գլխից: Ժանրային առումով այն քնարական-հոգևոր է: Հայտնի չէ, թե քանի տարի է գրվել պոեմը, սակայն Գրիգոր Նարեկացին այն ավարտին է հասցրել մահվանից մեկ տարի առաջ՝ 1002 թվականին:

Պոեմը գրաբարից աշխարհաբարի է վերածել Մկրտիչ Խերանյանը: ԵՊՀ պրոֆեսոր Վազգեն Գևորգյանը 1970 թվականին թարգմանել է պոեմի ծաղկաքաղը, իսկ 1979 թվականին թարգմանել է պոեմը ամբողջությամբ և տաղերը:

Գրիգոր Նարեկացու «Մատյանը» մեր եկեղեցու կողմից ճանաչվել է Աստվածաշունչ և դիտվել օգտակար «վարդապետության, հանդիմանության, ուղղելու եւ արդարություն խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծո մարդը՝ ամրացած բոլոր բարի գործերի համար»: «Նարեկը» ստեղծվել է որպես «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» և դարեր շարունակ ճանաչվել որպես հոգևոր կյանքի եկեղեցածիսական մատյան, քանի որ մարդիկ իրենց մարմնի եւ հոգու ախտերից բժշկվելու նպատակով մեծ հավատքով բժշկարան «Նարեկին» են դիմել՝ ապավինելով գրքի բուժիչ զորությանը:

«Նարեկը» թարգմանվել է աշխարհի տարբեր լեզուներով, ուսումնասիրվել է հայ և օտարազգի հայտնի գիտնականների կողմից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, վկայում է նարեկաբույժ Արմեն Ներսիսյանը, որ լեզուն չհասկանալու դեպքում էլ «Նարեկի» ազդեցությունը նույնն է: Անկախ ազգությունից, տողերը իրենց բուժիչ և հանգստացուցիչ ներգործությունն են ունենում հիվանդների վրա: «Նարեկի» ընթերցանությունը բարերար է ազդում ոչ միայն հայ, այլև այլազգի հիվանդների վրա, ովքեր Նարեկաբուժության արդյունքում ապաքինվում են: Այսինքն, կարևորը ոչ այնքան Նարեկացու «Մատյան»-ի բառերի իմաստն է, այլև բառերում ամփոփված տիեզերական տեղեկույթը, որը շրջապատին է փոխանցվում ընթերցանության ժամանակ առաջացող ձայնային տատանումների՝ վիբրացիաների ձևով: Այդ տատանումների հանճարեղ հեղինակները, տվյալ դեպքում՝ Նարեկացին, ստեղծագործական ներշնչանքի պահին տեղեկույթը ստացել է տիեզերքից, հանձնել թղթին, հետո՝ ընթերցողին:

«Մատյան ողբերգության»-ը գրվել է «հարց միանձանց և բազմաց անապատականաց» խնդրանքով: Դարեր շարունակ «Նարեկը» բուժել է հիվանդին, մաքրել՝ հոգիները: Գիրքը «Նարեկ» է անվանել ժողովուրդը՝ համարելով «դեղ

կենաց»: «Նարեկը» ստեղծվել է որպես «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», և մենք այն պիտի ընկալենք որպես աղոթամատյան՝ յուրօրինակ բժշկարան: Սա, բնականաբար, ամենևին չի նսեմացնում «Մատյան ողբերգության» ոչ գեղարվեստական, ոչ էլ տաղաչափական բարձրարժեքությունը: Նարեկացու հանճարեղ գործը դիտարկել որպես գեղարվեստական երկ, նույն է, թե Աստվածաշունչը ընդունել որպես գեղարվեստական ստեղծագործություն:

Նարեկացու «Մատյանը» իր բնույթով ու շոշափած խնդիրներով ինքնատիպ գործ է, որի նմանը ո՛չ Նարեկացուց առաջ և ո՛չ էլ Նարեկացուց հետո չի ստեղծվել հայ ու համաշխարհային գրականության մեջ: Նորագույն շրջանում , աչքի առաջ ունենալով այս ստեղծագործության քնարական բնույթն ու ծավալուն կազմությունը, ուսումնասիրողներն այն կոչել են քնարական պոեմ:

«Մատյան»-ի բովանդակության գլխավոր գիծը մարդու կատարելության խնդիրն է, որ սերտորեն առնչվում է մեղքի և մեղավորության քրիստոնեական ըմբռնմանը: Մարդը թեպետ Աստծո արարաչագործության բարձրագույն դրսևորումն է , բայց նախամարդու գործած մեղքի պատճառով դեռևս հեռու է կատարյալ լինելուց: Նարեկացու երկու հյուսված է մարդու մասին նման հայացք ունեցող անհատական «եսի» անունից, որ ինքը ՝ բանաստեղծն է:

Այսուհանդերձ, բանաստեղծը պոեմում միաժամանակ հանդես է գալիս ամեն դասի, սեռի ու հասակի մարդկանց մեղքերը, չար գործերը, մոլորությունները, հոգեկործան արարքներն իր մեջ ամփոփողի դերում՝ իրեն համարելով ողջ քրիստոնյա մարդկության ներկայացուցիչ.

Մեջս եմ ամփոփել երկրայինը ողջ,

Աղոթանվեր պատգամավորն եմ համայն աշխարհի:[1]

Անհատականի և ընդհանուրի այս միասնությամբ բանաստեղծական եսը աննկատելիորեն նույնանում է քնարական հերոսի հետ, նրանք դառնում են մեկ միասնական անձ: Նարեկացու հերոսը համակված է հանցապարտության գիտակցությամբ: Նա կարծում է, որ մարդկային ծնունդներից ոչ ոք իր չափ մեղավոր

[1] Գ. Նարեկացի, «Մատյան ողբերգության», բան ԻԸ, էջ 169

չի եղել, որովհետև չի կարողացել մտքի երիվարը բանականության սանձով կանգնեցնել և, «... մութ խորհուրդների միջից սլանալով», մարդկանց գործած բոլոր հին չարիքներին նորերն է ավելացրել: Նույնիսկ արարչի դեմ նենգավոր է գտնվել, ըմբոստացել, աստվածամարտ մտածումներ է ունեցել ու չի վախեցել նրա սպառնալիքներից: «Մատեան ողբերգութեան» մեջ նա ասում է. «Սպառնացար, և ոչ զառհուրեցայ, Արգահատեցեր՝ և ոչ երբեք լուայ, Որ է ապստամբութեան յայտնի նշանակ»:

Կործանվելու սարսափներին հաճախ հաջորդում է փրկվելու հույսը՝ կապված մեղքերի խոստովանության հետ: Պոեմի արտակարգ հուզիչ, դրամատիկ դրություններով հարուստ ընթացքն ավարտվում է լավատեսության հաղթանակով, Փրկության ե աստվածային էության հետ միանալու՝ աստվածանալու հավատով:

Ինչպես որոշ միստիկներ, այնպես էլ միստիկ Գրիգոր Նարեկացին ստեղծել է կատարելության ձգտող մարդու իդեալը՝ առաջ քաշելով կատարյալ էակի՝ աստծո պաշտամունքը: Նա պանթեիստորեն առաջադրում և յուրովի լուծում է մարդ և աստված, բնություն և աստված հարաբերությունը: Աստված ամենուրեք է և ամեն ինչում.

Ձի դու միայն ես երկնքում անճառ

և երկրում՝ անզնին,

Գոյության տարրերի մեջ և աշխարհի

բոլոր ծագերում,

Սկիզբն ամեն ինչի, և ամեն ինչի մեջ՝

ամբողջ լրումով:

Ըստ նարեկացու՝ Աստված փրկություն է բաշխում բոլորին , մեղքի մրրիկը դարձնում է քավության մեղմանուշ զեփյուռ , բարկության հուրը փոխում է կենսաբեր անձրևի : Նա անբավ քաղցրություն է, բերկրանքի աղբյուր , անսայթաք ուղի, անխարդախ խրատ:

Տիրոջ հանդեպ Գր. Նարկացու սերը կույր չէ. նա վստահ է, որ Արարիչ-մարդ հաղորդակցության մեջ մարդուն փորձության տանող և փորձույոնից մաքրված, նորացած դուրս գալու պարագան է, որ ամրապնդում, աներեր ու անվարան, հավերժ ու անկոտրում է դարձնում իր սերը Բարձրյալի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ ռուս գրողը, Գր. Նարեկացուն բնորոշում է ոպես «խորապես մարդկային», և «քրիստոնյա մարդասիրության արտահայտություն» : Լինելով նարեկյան դպրոցի վանական արիստոկրատիայի՝ Խ-.Անձևացու, Ան. Նարեկացու գաղափարակիրը և նոր որակի բարձրացնելով նեոլատոնականությունը՝ գրողը «Մատյան ողբերգության» մեջ մարդու գոյաբանության արժեքային նոր՝ մարդասիրական համակարգ է մշակել: Գր. Նարեկացին, ճիշտ է, Աստծո հետ հաղորդակցման ողիների իմացությունը համարել է մարդու գոյաբնության աժեքային համակարգի հիմքը, սակայն որպես երկրային արարած՝ աշխարհը մեռած չէր նրա համար: Այս ելակետով էլ հասկանալի են դառնում նրա ինքնաձաղկման աղաղակներն առ Աստված:

Պոեմի բովանդակության զարգացման ինքնատիպությունը, հույզերի, տրամադրությունների արտահայտումն ու պատկերումը պահանջում էին պոետիկական նորանոր հնարքներ ու միջոցներ: Բանաստեղծը խորապես գիտակցել է իր ստեղծագործության էության առանձնահատկությունները և, դրանց համապատասխան, արտահայտչական ձևեր ստեղծելու անհրաժեշտությունը: Թե՛ մարդկային կյանքի իրադրությունները, թե՛ բնության երևույթներն օգտագործված են բանաստեղծի կողմից իբրև համեմատություններ ու փոխաբերություններ՝ ապրումների ու հոգեվիճակների գեղարվեստական մարմնավորման համար: Նարեկացու փոխաբերությունները, համեմատությունները, էպիտետները, որոնք պոեմում հորդում են հեղեղի նման, միշտ ինքնատիպ են, համարձակ և գեղագիտական բարձր ճաշակի ու զգացողության արտահայտություն:

Ժամանակի գրական լեզուն՝ գրաբարը, ինչ հարստության որ հասել էր պատմիչների, եկեղեցական գրողների ու բանաստեղծների գործերում, չէր կարող Նարեկացու ստեղծագործական երևակայության անսահման թռիչքը, իրարամերժ խոհերի ու զգացմունքների բոլոր նրբերանգներն արտահայտել: Նրանից առաջ բուն բանաստեղծության լեզուն շատ ավելի աղքատ ու միակերպ էր, քան մեր պատմիչների լեզուն: Եկեղեցական դոգմաներին հետևելը խանգարում էր հոգևոր երգերի

(շարականների) հեղինակներին լեզվական նորամուծություններ կատարել այն աստիճան, որ նրանց լեզվական անհատականությունը գրեթե կորչում էր: «Մատյան ողբերգութեան» պոեմի հավերժ մնայուն գեղարվեստական արժեքը, բովանդակության խորության ու մեծության հետ, պայմանավորված է նրա պոետիկական արվեստի անսահման հարստությամբ: Նարեկացու բանաստեղծական արտահայտչական միջոցներն ու ձևերը անսպառ են, բազմազան ու գունագեղ, իսկ բառարանը՝ հայ գրականության մեջ ամենահարուստը:

Գրիգոր Նարեկացին գրականության մեջ մնաց անգերազանցելի՝ բովանդակության համապատասխան ոտանավորի տարբեր չափեր ստեղծելու և օգտագործելու, ռիթմի ու երաժշտականության անկրկնելի արդյունքների հասնելու հարցում: Մ. Մեծարենցը ճիշտ է նկատել, թե Նարեկացին «գիտեր ծովածայն հնչեցնել բառերը»:

Նարեկացին, որպես երաժիշտ, նոր շունչ ու կյանք է հաղորդել հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստին: հատկապես իր տաղերի երաժշտական բաղադրիչներում հաղթահարված են շարականների հին, ութ-ձայնի դրությանը կապված եղանակների կազմության՝ տվյալ պատմաշրջանի համար արդեն քարացած ձևերը: Ընդհանրապես նախատեսված չլինելով պարտադիր-կիրառական նպատակների համար՝ տաղերն ազատ են մնացել եկեղեցական կանոնական մտածողությունից ու ավելի անկաշկանդ (քան, օրինակ, շարականները) հարստացել ժող-գուսանական արվեստից եկող կենսունակ տարրերով: «Մատեան ողբերգութեան» պոեմի գեղարվեստական անընդգրկելի մեծության ամենացայտուն ապացույցներից է մեր գրականության վրա թողած նրա հսկայական ազդեցությունը: Նրանից սովորել և ներշնչվել են ոչ միայն միջնադարի, այլև նոր ժամանակների հայ պոեզիայի նշանավոր դեմքերը:

Գ. Նարեկացու «Մատյան...»-ի ուսուցումը

Ցանկացած օր յուրաքանչյուր ուսուցիչ իր դասը սկսելուց առաջ ունի մտավախություն՝ ինչպես և՛ հետաքրքիր, և՛ տպավորիչ սկսել դասը:Դասի տպավորիչ մուտքից է կախված ուսուցման հետագա հաջողությունը:

Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի ուսուցումը արդեն իսկ դժվար է. հեղինակի տիեզերական մտածողությունը ներկայացնել սովորական բառերով և իջեցնել դպրոցական մակարդակի, արդեն իսկ հանգեցնում է թեմայի ուսուցման համարյա անհնարինության:

Դասի սկզբում կառուցում ենք «Բազմանիստ» Նարեկացի մեկնաբառով. բազմանիստի / պրիզմայի/ բովանդակությունը պայմանավորված է նրանով, թե ինչ բառեր, գաղափարներ կհայտնեն սովորողները: Վերջիններս ուսուցչի պահանջով սկսում են թվարկել այն բառերն ու արտահայտությունները, որոնք առնչվում են Նարեկացի բառի կամ անվան հետ: Սովորողներին տրվում է ժամանակ, որպեսզի նրանք կազմեն մեկ նախադասություն՝ իրար կապելով պրիզմայի մեկնաբառը և վերջնաբառը:



«Բազմանիստ» -ի ծավալը կախված է բառի հետ առնչվող բառերի քանակից:

Իսկ հետո վեր ենք հանում աշակերտների գիտելիքները Գրիգոր Նարեկացու կյանքի և ստեղծագործության վերաբերյալ: Եվս մեկ անգամ հիշեցնում ենք Նարեկացու ապրած ժամանակաշրջանը և Նարեկացու արվեստին բնորոշ առանձնահատկությունները:

Նարեկացու ապրած ժամանակաշրջանը խաղաղության դարաշրջան էր, հայ ժողովուրդը բռնել էր կյանքի նորոգման ուղի: Հարյուրամյա խաղաղության շրջանում հայ ազգը վերաշինել էր իր պետականությունը և զարգացրել մտածողության բոլոր ձևերը:

Սբ Գրիգոր Նարեկացու մասին միջնադարից ի վեր ժողովուրդը ստեղծել է ավանդազրույցներ:

Ներկայացվող ավանդազրույցների աղբյուրը Ա. Ղանալանյանի կազմած եւ 1969 թ.-ին լույս տեսած «Աւանդապատում» ժողովածուն է: Վերջինում տեղ գտած այս զրույցները, գրաբարով են, բարբառալեզու կամ արևելահայերեն:

Սովորողներին ներկայացնել ավանդազրույցներից մեկը .

Աղաւնիների կենդանացում

Մի քանի յաչաղկոտներ չարախօսում են Նարեկացու մասին եպիսկոպոսների եւ իշխանների մօտ: Իշխաններն ու եպիսկոպոսները հաւաքուելով՝ ուզում են նրան դատի մատնել. հրաւիրակներ են ուղարկում Գրիգորի մօտ, որ նրան առնեն դատարան տանեն: Նարեկացին հեզութեամբ ընդունում է եկողներին եւ ճանապարհ ընկնելուց առաջ հացի հրաւիրելով նրանց՝ առաջները դնում է երկու խորոված աղաւնի: Օրն ուրբաթ է լինում. հրաւիրակները յիշեցնում են այդ մասին Նարեկացուն: Վերջինս ներողութիւն է խնդրում, որ մոռացել է, թէ օրը պաս է, եւ ասում է, որ հիւրերը հրաման տան աղաւնիներին թռչելու: Հիւրերն, իհարկէ, այդ չեն կարողանում անել: Ինքը՝ Նարեկացին, նրանց տեղ հրամայում է, եւ աղաւնիները կենդանանալով թեւ են

առնում ու թռչում: Եկողները, իրենց աչքով տեսնելով Նարեկացու սրբութիւնը, սարսափում են, եւ ամբաստանութիւնը խափանւում է:[2]

Հարկ է նաև սովորողներին ներկայացնել «Մատյանը» գրելու շարժառիթը:

Կենսագրությունը ուսումնասիրելու ժամանակ արդեն աշակերտները տեղյակ են այն մեղադրանքներին,որ ներկայացվել են Նարեկացուն և նրա հորը:

Նարեկացուն անվանել են ծայթ,այսինքն՝ հավատուրաց:Նարեկացին ստիպված էր արդարանալ և էլ ավելի խորացնել իր հավատը,որովհետև ուրիշ կառչելու տեղ չուներ.Աստվածն էր ու ինքը:

Անկասկած ճաշակած անձնական հալածանքը, ինչպես նաև ծանրագույն ճգնաժամային հոգեվիճակը, որում հայտնվել էր բովանդակ Հայաստանը կրոնական առճակատումների և երկփեղկվածության պատճառով, միտք էին տվել նրան գրել այնպիսի գործ,որը լուծում կտար ստեղծված իրավիճակին:Նա քաջ գիտակցում էր ,որ կրոնական բնույթի առճակատումները շեղում են մարդուն ճշմարիտ ուղուց:Սա էր գուցե նպատակը,որ նա վերցրեց գրիչը ու ստեղծեց եզակի ու բացառիկ մի կոթող:

Հոգու մաքրագործման աղոթագիրքը ուսումնասիրելու համար նպատակահարմար է սովորողներին ուղղել պարզ և սովորական հարց-առաջադրանք. «Ի՞նչ է աղոթքը»

Աղոթքը միություն է Աստծո հետ: Աղոթքն այն կապն է, որով մարդը միանում է իր Արարչին, սրտակից զրույց ունենում Նրա հետ, հոգով բարձրանում դեպի Աստված և մտերմանում Նրա հետ:

Աղոթք – ըստ Տաթևացու բառի հիմքն է աղը,այսինքն՝ որպես աղն համենայնի իր խառնի և զամենայն ի համ բերէ:

Տեղին ենք համարում մեջբերել սուրբ Օգոստիանոսի հայտնի աղոթքը.«Տեր,այդ ինչպես է լինում,որ ճամփորդելիս զարմանում ենք լեռների բարձրությամբ,ծովերի անծայրածիրությամբ,գետերի հունով,աստղերի ընթացքով,իսկ երբ նայում ենք ինքներս մեզ,չենք էլ նկատում մեծագույն հրաշքը» :

[2] Սկզբնաղբիւր: Երուանդ Լալայեան, Վասպուրական (Ազգագրական հանդէս, ԻԶ գիրք, Թիֆլիս 1916, էջ 94

Այնուհետև կինչի մյուս հարցադրումը.«Ի՞նչ եք զգում,ի՞նչ ապրումներ եք ունենում ,երբ անցանկալի ,վատ արարք է կատարվում» :Մտքերի փոխանակման ընթացքում որպես նախագիտելիք անդրադառնում ենք մեղք,զղջում,խոստովանություն հանգուցային բառերին՝ սահուն անցում և իմաստալից կապ ապահովելով բանավոր հաղորդման համար: Արդյոք մե՞ղք գործեց Նարեկացին, երբ միջնադարի պայմաններում դուրս եկավ եկեղեցու դոգմատիկ մտածողության շրջանակներից և փորձեց զուգահեռներ անցկացնել մարդու և Աստծու միջև և ձուլվել աստվածային էությանը:

Իմաստալից բանավոր հաղորդումը կօգնի, որ մտքերի փոխանակման ընթացքում ծնված զգայական ընկալումները փոխակերպվեն գիտակցականի, այն է՝ մեղքը կարելի է քավել անկեղծ զղջմամբ և խոստովանությամբ: Սովորողները բանավոր հաղորդման միջոցով շնչակից կդառնան մարդկային բազմահազար մեղքերի գիտակցումից ծնված մեծ ողբերգակի «կողկողաձայն» պաղատանքին,մեղավոր հոգիների դարձին սպասող, թեև անտեսանելի, սակայն զգայելի տիեզերական զորությանը՝ ամենագութ և ամենատես Աստծուն:

Չպետք է խուսափել Նարեկը որպես բուն քրիստոնեական դավանաբանական գործ ներկայացնելուց, քանի որ պոեմն ուսումնասիրելիս սովորողներն անպայմանորեն կզգան դա: Այլ խնդիր է, որ նրանց մեջ կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ դավանաբանական բնույթի երկը տեղ է գտել դպրոցական ծրագրում և ուսումնասիրվում է որպես գրական գործ: Այսպիսի մտածումները երբեմն կաշկանդում են սովորողներին, ծնում անտարբեր, երբեմն վախվորած և զգուշավոր վերաբերմունք . չէ որ նրանցից շատերը ընտանեկան դաստիարակության , միջավայրի, ինչո՞ւ չէ, նաև տարիքային մտածողության սահմանափակումների պատճառով ոչ ճիշտ, թյուր պատկերացում ունեն և հոգևոր գրական ժառանգության, և եկեղեցական տոների, ինչպես նաև ծիսական արարողակարգերի և այլ արժեքների նկատմամբ: Այդ պատկերացումները երբեմն իրար հակադիր են և ծայրահեղ:Ինչպես վարվել: Ուսուցչի խնդիրն է օգնել,որ սովորողները ճիշտ ըմբռնեն իրենց համար դժվարընկալելի այդ արժեքների մարդկային և աստվածային ներդաշնակ համադրության իմաստային , հոգեբանական շերտերը:Դրա համար անհրաժեշտ է, որ նրանք բնագրային հաղորդակցումից բացի հաղորդակցվեն

լրացուցիչ այլ նյութերի, ուսումնասիրեն դրանց աստվածային խոկումների և գրական արժեքների առնչակցությունները:

Կարելի է հանձնարարել, օրինակ, որ սովորողները որպես հետազոտական աշխատանքի նյութ ընտրեն և արձակ փոխադրեն Վահագն Դավթյանի «Գիշերային զրույց Նարեկացու հետ» պոեմը կամ քննական վերլուծությամբ ներկայացնեն մերօրյա բանաստեղծի և Նարեկացու մերձավորությունը, ոճական նմանությունները և տարբերությունները : Զուգահեռներ ենք անցկացնում նաև Նարեկացու «Մատյանի» և Մ.Խորենացու «Ողբի» միջև: Խորենացին պատկերեց պետականության կործանման հետևանքով բարոյազրկված ժողովրդի տարբեր խավերին,Նարեկացին պատկերեց մեղքերով ապականված ողջ մարդկությանը՝ արքաներից մինչև վերջին մուրացկանը:

Դասն ամփոփում ենք «երկու բան» հնարի միջոցով՝ սովորողներին բաժանելով հետևյալ ձևանմուշները.



Եզրակացություն

Նարեկացին իր ստեղծագործությունը ճանաչում է որպես կյանքի փրկության դեղ և խոստովանության ճանապարհի ուղեցույց, կյանքի կանոնների պատգամ-մատյան: Հասկանալի է դառնում, որ քրիստոնեական այս երկը բանաստեղծի աչքում մարդու փրկության վեմն է: Նա շնորհ է հայցում Խաւսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ:

Բանաստեղծը հենց սկզբից հռչակում է երկի վերընծայումը Տիրոջը : Իրեն դիտարկելով որպես բանական զոհ, երկը համարում է իր կամավորական նվերը, այն էլ «ողջակիզեալ» : «Ողջակիզեալ» -ը պետք է ընդունել մարդկային հանցավորության քավության նշան: «Մատեան» -ում ձևավորում է ստացել իր իսկ նշանակության խորհուրդը: Այն անբաժան է պատմության աստվածաբանական կառուցվածքի ընկալումից: Իսկ այդ կառուցվածքը միջնադարագետն այսպես է բնութագրել. «Մեղքով, թողությամբ ու փրկությամբ ռիթմավորված ընթացքը ձևավորում է պատմության աստվածաբանական կատուցվածքը» : Երկի խորհուրդը պարփակված է պատմության աստվածաբանական այդ նույն կառուցվածքում (մեղք, թողություն, փրկություն):

Անտարակույս, Գր. Նարեկացու ստեղծագործության գլխավոր նպատակը մարդկության փրկությունն է: Հարկ է նկատի ունենալ, որ քրիստոնեությունը Որդու՝ Փրկչի պաշտամունքի կրոն է, «Մատեան»-ը փրկության ուղիների որոնման, փրկության հավատի ստեղծագործություն է: Բանաստեղծը մարդու փրկությունը տեսնում է մաքրագործման և Աստծո հետ վերամիավորման մեջ:

Այսպիսով՝ Նարեկացու «Մատեան»-ը հոգին մաքրագործող բարձրարվեստ մի գրական կոթող է, որի ուսուցումը բուն գրական գիտելիքներից բացի պայմանավորում է սովորողի բարոյական կերպարի, մասնավորապես հոգևոր ընկալումների ձևավորում և զարգացում: Ուստի այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ցուցաբերել ուսուցման կազմակերպման այլ մոտեցումներ , որոնց շնորհիվ էլ աշակերտների մեջ կձևավորվի պոեմի դերի և նշանակության գիտակից ընկալում :

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայոց լեզու և գրականություն, 2016 թ
2. Հայ գրականություն, 10-րդ դասարան, Երևան, 2021
3. Գրիգոր Նարեկացի , «Մատեան ողբերգութեան», Ս. Էջմիածին,2018 թ
4. Սերոբ Խաչատրյան, «Ուսուցման արդյունավետ մեթոդներ և հնարներ», 2020 թ